№ 12 ԹԷՀՐԱՆ ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼ 23

1896

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ԵՐԵՔՇԱԲԹԻ ԱՊՐԻԼ 23 № 12

«ՇԱՒԻՂԸ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուայմը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման գրպեսան 8 ֆր. կամ 3 ռուբլի կամ տարեկան գրպեսան 4 ռուբլի։

Խմբագրութեան փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամենալեզուով իրաքանչիւր բառին մի անգամայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԸԹԱՆԿԱԳԻՆ ԿՈՐՈՒՍԸ

I

Համայն Պարսկաստանը և նրա մէջ ապրող տասն և երկու միլիոն ժողովուրդը, որ ամենայն ոգևորութեամբ սպասում էին հինգ օրից յետոյ տեսնել և վայելել մի ուրախութեան և հարիւրաւոր դարերից յետոյ ամենահազուագիւտ մի ուրախութեան ամենաքաղցր հաճոյքները և համարել իրենց երջանիկ ու բաղդաւոր, հանդիպեցան մի բէկկիամ. այսօր ողբում են, ողբում են յիսուն երկար տարիներ, գիշեր ու ցորեկ անընդհատ իրենց վրայ մտածող, հոգացող մի Հայր և պահպան միակ Հրեշտակը կորցնելուն համար..

Պարսկաստանը, որ մինչև ամենայետ ընկած անկիւններումն իսկ ամենայն ժրաջանութեամբ և շուտափութեամբ, մոռացած իր հանգիստն ու քաղցը քունը, աշխատում էր ամեն բանով հաճելի դառնալ իր բարեխնամ Հօր աչքին և անհամբեր սպասում էր աւելի ուրախալի դարձնել Նրան ամենից փափագեալ Մեծ Օրը, այսօր նա համբերութեամբ կրեց սոսկալի հարւածը և տխուր ու տրտում, անիծելով իրեն թշուառութեան ու դժբաղդութեան մատնողին, ակամայ ականատես է լինում իր Պաշտելի Էակի իր միջից բարձրելուն...

Պարսկաստանը, որ ամբողջ երկու ամիս, զօրավարժութիւններով, թնդանօթաձգութիւններով և քաղցր անմաղ երաժշտութիւններով թնդեցնում էր օդը պատրաստելով դեռ էլ աւելին անել՝ մանաւանդ իր խնդակցական աղաղակներով, Պանծալի Օրում, որին իր սրտին և աչքին այնքան մօտ տեսնել էր կարծում, այսօր լռեց նա մէկ բոպէում, մինչև սրտի խորը խոցւած թռչնակի նման և յուսահատ ու ակամայ արտասուելով պիտի տեսնէ ու լսէ մի Բազմերախտ Հօր և միակ տիրոջ յուղարկաւորութիւնն ու սգալի մեղեդիները...

Ողբում է Պարսկաստան և իր ժողովուրդ ու արտասուում, իրենց Յիսնամեայ Զարդից մերկացելուն համար ինչպէս և արեգակն ու երկինք, կարծես կարեկից մի որբացեալ ժողովրդի ծածկել էր իր պայծառ ու լուսատու երեսն ու արտասուում ամբողջերեք օր..։

Պարսկաստանի միլիոնաւոր ժողովուրդը որ պատրաստւում էր, յիսուն տարի շարունակ իր վայելած բարիքների ու երջանկութեան փոխարէն, որպէս ամենաթանկագին ընծաներ միմիայն իր երախտագիտական զգացումներն ու իր որդիական հնազանդութիւնը դնել հպատակասէրմիՎեհապետի գահոյիցոտքերիտակ, և խնդակից աղաղակներով ոգջունել, տրեւշատութիւն մաղթել ու հայր անւանել Նրան, այսօր նա պարտաւորւում է արտասուալից աչօք ու դողահար ձեռօք պակներ հիւսել ու ժողովրդապաշտ ու Հայրենասէր Նսհատակի մարմինը կրող մի սգալի դագաղի վրայ դնել, հանգիստ արքայութիւն մաղթելով Նրան...

Պարսկաստանն ու ժողովուրդը մի բոպէում միայն կորցրին ինչ որ աւելին ու ամենաթանկագինն էր յանձին Ն. Կ. Վ. Թագաւոր Հայր ՆԱՍԷՐԻԴԻՆ բարեսէր ու մեծդասէր Շահն Շահին, սակայն երկար պիտի ողբան ու արտասուին այդ Կորուստի վերայ և ցաւիտեան հրճւանօք պիտի յիշեն Նրա քաղցր յիշատակը։

Պարսկաստանը տուաւ իր Զոհը. սակայն անէծքով պիտի յիշէ իր պատմութեան էջերում, այն նզովից ու անիծից արմատին, այն հայրասպան ու ապիրատին, որոյ ձեռքը խլեց իր միակ պաշտպանին ու զրկեց իրեն վայելել հազարաւոր տարիներից յետոյ հազւադէպ միակ ուրախութիւնն։

II

Թէև Պարսկաստանն ու պարսիկ ժողովուրդը ողբում են այդ Թանկագին Կորստի վրայ, բայց որքան աւելի և մենք իրաւունք ունինք, մենք պարսկահայերս, վշտահարւելու և խորին սգով համակւելու։

Իրաւունք ունինք և ճիշտ է։ Մենք ներկայ սերունդս, բախտաւոր ենք եղել քան մեր նախահայրերը, մեր նախնիքի մօտ մենք նախանձելի և ապագայ սերնդի առաջ երանելի ենք. մենք ապրել ու ապրում ենք Պարսկաստանայ Ոսկեդարում։

Ո՞րքան ուրախութիւն է տեսնել ամեն տեսակ կրօնի պատկանող ժողովուրդներ, երբ ապրում են մի հայրախնամ ու հոգածու ձեռքում բռնած գուազանի ներքոյ, համահաւասար ու եղբայրաբար։

Մենք բաղդաւոր ենք եղել վայելելով Նահատակ Թագաւոր Հօր ամեն տեսակ արքայական շնորհները։ Մենք, այսօր մեր առաջադիմութեամբ, կրթական և ամեն ազգային գործերով, ու հրատարակութիւններով պայծառ ենք միմիայն Նրան՝ այն Մեծ Մարդուն, որին խլեց մեզանից մի դաւաճան մի հայրասպան ձեռք։

Մենք վայելել ենք կատարեալ երջանկութիւն, ազատութիւնմանաւանդ խղճիակրօնի ազատութիւն և խիստ կերպով պատժել է այն յանդուգը, որ ազգին էլ որ պատկանէր, որ երբէք մտածել է խոչնդոտն լինել մեզ՝ մեր ազատութեան մէջ։

Բացի այն որ Ի Տէր Հանգեալ Թագաւոր Հօր յատուկ ուշադրութեան ենք արժանացել, բացի այն որ Նա մեզ ազատ է կացուցել որ և է քաղաքային ու տէրունական տուրքերից, դեռ արքունական գանձարանից էլ նպաստել է, անխտիր մինչև այսօր մեր ամեն հայաբնակ քաղաքների ամեն ազգային հաստատութիւններին։

Մենք աւելի պատճառ ունինք ողբալու մեր Կորստի՝ անգիւտ Կորստի վրայ, մենք աւելի իրաւունք ունինք ցաւակցելու և վշտակցելու այն պարսիկ ժողովրդին, որոյ հետ միասին, յիսուն տարի վայելել ենք բազմագութ Թագաւոր-Հօր բարիքներն ու շնորհները, այն ժողովրդին, որ թէև արտադրեց իր միջից հայրասպանն ու դաւաճանը, սակայն կարողացաւ յարգել նրա յիշատակը վերջին բոպէումել, իր օրինակելի կարգապահութեամբ։

Թէև պարսկահայերս բաղդ չունեցանք յոբելեանի առթով դնել մեր երախտագիտական զգացումները յոտս Ն. Նահատակի գահոյից, սակայն ուխտում ենք նրա սուրբ դագաղի վրայ մեր որդիական հնազանդութիւնն ու հպատակութիւնն առ Նրա Արժանաւոր Յաջորդն ու Ժառանգն Թագին ու Գահին Պարսից։

—

Ի Տէր Հանգեալ Թագաւոր-Հօր և Նորա Կայսերական տան մանրամասն կենսագրութիւնը լինելով «Ղաջար Տան» պատմութեան բաժինը, որ կը տանք յաջորդ թւով, ներկայ համարով տալիս ենք հետևեալ համառօտ տեղեկութիւնները։

Նահատակ Թագաւոր հայրը ծնւել է, 1247 թ. Սաֆար 6-ին (17 յուլիսի 1831) կիրակմուտ 4 ժամ ու $^1/_4$ արևմտից անց։

Թագաւոր է հրատարակւել 1264 թ. շավալ 18-ին (17 սեպտ. 1848) կիրակմուտ 20 վարկեան արևմտից անց։

Ն. Կ. Մ. Մօզաֆֆարէդդին Շահը ծնւել է 1269 թ. Ձէմատի-էլ-սանի 14 ին, որ այժմ լինելով 1313 թւականը, 44 ամայ և 4 ամսոց հասակի է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 19-Ը

—

Ամսոյս 19-ին ուրբաթ առաւօտ, սովորական կերպով ինչպէս միշտ, առաւօտեան ժամը $7^1/_2$-ին Ն. Կ. Մեծութիւն Թագաւոր-Հայրը բարեհաճում է պտոյտի ելնել, բայց այս անգամ, դժբախտաբար, պտոյտի տեղը ընտրելով քաղաքից մէկ մղոն հեռաւորութեամբ եղած Շահ Ապաօլ Ազիմ ուխտատեղին։

Ժամը 11-ին, մի անսովոր և անհանդիստ իրարանցում, ձիաւորների սլարշաւ ընթացքը պալատից դէպը զանազան փողոցները, և պալատական բժիշկների և բարձր զինուորականների աճապարանօք և անժամանակ դէպի պալատ վազելը գրաւեցին հասարակութեան ուշադրութիւնը և նրանց ակնապիշ նայւածքը՝ պալատի ուղղութեամբ։

Ժամը 12 ին, արդէն շրջափակ պալատը բռնել էր զօրքով. թոփխանէի և ուրիշ դռներից մուտքը արգիլւած էր արքունիքում։

Թէև ուրբաթ ազատ օր և կէսօր, սակայն արտակարգ և յուսահատ շարժումներն պատճառով, արդէն հետաքրքիր բայց մի վատ նախազգացումից դրդւած ժողովուրդը մխել էր մեծ փողոցներում և հրապարակներում, և ընդհանրապէս սպասում անհաւատալի ու անսպասելի մի բոթի, թէ յանձին որի՞ հասկանալի չէր...

Լուր տարածւեցաւ թէ պալատում հիւանդ կար. այդ լուրը զոհացուցիչ չէր։ Ասւեցաւ թէ ուխտատեղիում մի նախարար զարնւած է. սակայն այդ լուրն էլ, պակասքան մի չարապասիկ լուր մի բոթ, մի քոմսելի եղեռի ծանուցում, ժողովրդի ճմլող սրտերի վերայից անցաւ, առանց մի բարերար ազդեցութեան։

Ժամը 1-ին, վերջապէս, լուր տարածւեց բայց անհաւանական որպէս թէ Ն. Վ. Թագաւոր Հայրը ոտքից զարկւել է բայց, անվտանգ է, նայելով ելևոյթներին մօտաւորապէս այդ ճիշտ թւեցաւ. մի այլ ցաւ մի այլ յուսահատութիւն սկսեց ճմլել ժողովրդի սիրտը, այն ժողովրդի որը պատրաստւում էր արդէն 4-5 օրից յետոյ. իր սիրեցեալ Վեհապետի, իր զբաղատ Հօր յիսնամեայ տօնի հաճոյքները վայելել և դրդել Նրան հեռզհետէ դիմել դէպի կեդրոն, դէպի այնվայր, ուր միշտ սովոր էր տեսնել իր Վեհապանծ Հօրը շրջապատած փառքերով, բայց դեռ այդ Սիրեցեալ Հայրը չը կար, իսկ իրարանցումն արդէն ընդհանուր էր։

Ժամը երկուսին, թնդանօթների հրապարակի զինուորական շեփորների ուրախական հնչումներն աւետեցին Ն. Վեհափառութեան վերադարձը, կառքի մէջ 3—4000 զինուորներով շրջապատւած։

Վեհափառ Թագաւորը իր՝ սովորականից դուրս զարդարւած շքեղութեամբ, մէջքի վրայ յենւած էր կառքին շրջապա-

տուած նախարարապետով և իր փեսայով։ Նախարարապետը հովահարում էր Ն. Վեհափառութեան գունաթափ երեսը։

Ժողովրդեան տիրեց ուրախութեան և յուսոյ նշոյլներ իր Սիրեցեալ Հօր կըրկին տեսնելուն պէս, այն փափագով որ վտանգաւ ը կերպով վիրաւորուած չէրլինի. ժողովրդեան յոյսը արդարացաւ նրանով, որ յայտարարուեցաւ թէ Թագաւոր Հայրը շուտով դուրս է ելնելու փողոցներում կառքով պտոյտ գործելու։

Ժամը երեքին պաշարման և զինավառութեան մէջ տրուեցաւ քաղաքը, իսկ ժողովուրդը հազարներով խմբուած գլխաւոր անցքերի վերայ որտատրոփ և անհամբեր, ժամը 4-7, սպասում էր իր սիրելի Հօր ցանկալի տեսութեանը, բայց ի զուր....

Ժամը 7-ից 12-ը ամեն տեղ տիրում էր խորին և խորհրդաւոր լռութիւն. սև նախազգացումը արդէն զգացնել էր տալիս մարդու պաշտեցեալ մի Էակի թանկ և անսպասելի կորուստը։

Սպառազինեալ և զանազան հրամաններ գործադրելու գնացող ասպահմբերը, ամեն կողմից փողոցներից յատակը դղրդեցնող սարշաւ կառքերը և պահպան զօրաց կանոնաւոր քայլերի ձայներն էին միայն, որ այդ խորհրդաւոր գիշերայ մինչև առաւօտայ լռութիւնն ընդհատում էին։

Հսկում էր խնամակալ կառավարութիւնը պալատում, իսկ ժողովուրդը իր տան մէջ, որ գուշէ համոզուած մի տըխուր իրողութեան վրայ ցաւ ի ոիրտ և մեծ վշտով, սպասում էր միւս օր առաւօտեան ժամը 10 ին պաշտօնապէս լսել իր պաշտպան Հրեշտակի կորուստը և ողբալ, որպէս թշուառացեալ և հայրակորոյս զաւակներ, իր բաղդի և վիճակի վրայ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ամսոյս 19-ին ուրբաթ օր ժամը 11-ին ձայն գուժեց 'ի զարմանս և 'ի մեծ տխրութիւն աշխարհի Ն. Կ. Վեհափառութիւն ՆԱՍԷՐԷԴԻՆ Շահնշահի Շահ-Աբդօլ-Ազիմ ուխտատեղիում գնտակով զարկուելը։

—

Ամսոյս 20-ին՝ շաբաթ օրը, պաշտօնապէս՝ Մայր Մզկիթում, 'ի լուր ընդհանրութեան, և շրջաբերականով դեսպանատանց յայտարարուեցաւ Ն. Կ. Վ. Թագաւոր Հօր նահատակութիւնն և 'ի մեծ ուրախութիւն ընդհանուր Պարսկաստանի Վեհափառ Նահատակի արժանաւոր ժառանգի Ն. Կ. Մ. Մօզաֆֆարէդդին Միրզայի Շահ հրատարակելը։

—

Ն. Կ. Մեծութիւն Մօզաֆֆարէդդին Շահը մեկնելու է Դավրէժից և Նրա պաշտօնական մուտքը մայրաքաղաքումս սպասւում է շատ շուտ։

—

Ն. Կ. Մ. Մօզաֆֆարէդդին Շահը բարձրագոյն հեռագրով յանձնել է ամբողջ պետութեան կառավարութիւնն ու գործերը Ն. Վ. Նախարարապետին մինչև Իր շնորհաբեր մուտքն ի մայրաքաղաք։

—

Շնորհիւ Ն. Վ. Նախարարապետի լուրջ և խելացի կառավարութեան, օրինակելի խաղաղութիւն ու հանդարտութիւն է տիրում ընդհ. Պարսկաստանում, մանաւանդ մայրաքաղաքում։

—

Մայրաքաղաքում կարգը պահպանելու համար, քաղաքը դրուել է կատարեալ զինավառութեան մէջ և խիստ պաշտպանութեան տակ է առնուել Արքունիքը։

—

Պաշտօնապէս հրամայուել է Պարսկաստանի ամբողջ զօրաբաժիններին և արտիլերիային ընդառաջելու Ն. Կ. Մ. Թագաւորին։

—

Թէև ի տէր հանգեալ նահատակ Թագաւոր-Հօր օրով բարձրագոյն հրամայուած էր ուտելեաց տուրքերի բարձումը և արժանութիւնը, սակայն այժմեան խնամակալ կառավարութիւնն այս աղետալի դէպքի առթով առաջն առնելու համար զանազան քինախնդիր և վրիժառու մարդոց ձգտումներին, միջոցներ ձեռք առաւ սովորականից շատ աւելի արժանութեան և առատութեան մէջ դնել ուտելիքը։

—

Ամբողջ դատարանները ինչպէս և ուրիշ արքունի շատ հաստատութիւններ 40օր փակ էին։ Պետութեան գործերը կառավարելու և կարգապահութիւնը հաստատ պահելու համար կարգուել է զինուորական ատեան։

—

Ն. Կ. Վ. Նահատակ Թագաւոր-Հօր վերայ քստմնելի փորձը կատարող նզովեալ արարածները ձեռբակալուած են մօտ 20 հոգի, ընդհանուր մի դաւադրութիւն կայ այդ եղեռական գործի մէջ, որին մասնակից են ևկանայք։ Ոճրագործը մի հոգի էր։ Սպանութեան շարժառիթը յայտնի չէ։ Քննութիւնները շարունակւում են։

—

Բարձրագոյն հրամայուած է դեռ չը կատարուած սակայն նուիրագործեալ Յոբէլեանի կազմակերպուած հանդէսները և պատրաստութիւնները չը խանգարել այլ ծառայացնել Թագադրութեանը։

—

Յոբէլեանի առթով մայրաքաղաքս ժամանած բոլոր զինուորական և այլ բարձր պատգամաւորութիւններն իրենց դրօշակներով, հրահանգ ստացան ընդառաջելու Ն. Կ. Վեհափառութեան։

—

Աննպաստ լուրեր են հասնում մեզ սովելոց անուան տակ հանգանակուած գումարների մասին, մանաւանդ որ Պարսկաստանի միւս քաղաքներից էլ մեծաքանակ նուէրներ են հասնում, որով լիշեցնում ենք «սովելոց յանձնաժողովին» և երեկոյթներ կազմակերպողներին, որպ սրտաւորեն այդ գումարների քանակութեան և նրանց գործադրութեան եղանակի մասին գոհացուցիչ բացադրութիւն տալ, և այդ կը լինի մինչև շաբաթ օր, ապա թէ ոչ յաջորդ թւով մենք կ'աւենք այդ մասին մեր վերջին խօսքը։

—

Փոխ. Հայրը, ամսոյս 21-ին կիրակի օր եկեղեցու բէմից յայտարարելով սգալի բօթը, որոշեց առ այժմ 3 օր հայ դպրոցները փակել։

—

Ղ. զվինի և Դավրէժի հայ հասարակութիւնների կողմից Յոբէլեանի առթիւ պ. պ. Բ. տէր Սարգսեան և Ս. Մելիք Աբրահամեան պատգամաւորները հասան, բայց դժբաղտաբար աղէտի օրը։

—

Որոշուել է հայ համայնքների կողմից նահատակ Թագաւոր Հօր տրուելիք ընծաների խորագիրները փոխելով ընծայել Թագադրութեան առթիւ Վեհափառ Գահակալին։

—

Ի տէր հանգեալ Վեհափառի մարմինը պահւում է Թաքիա Դօվլաթում և յուղարկաւորութիւնը տեղի կունենայ նոր Գահակալի գալստից յետոյ։

—

Աղէտը իմացուելուց իսկոյն բոլոր դեսպանները աճապարեցին պալատ և այն տեղից Ն. Կ. Մ. Արքայորդի, պատերազմական նախարարի մօտ, յայտնելու իրենց զարմանքը և ցաւակցութիւնը պատահած աղէտի առթով։ Ամենից ուշ մնաց տաճիկ դեսպանատունը։

—

Շուկաներում, ողբացող ժողովուրդն արդէն սկսել է դժբաղդացեալ Վեհափառի հոգեհանգստի արարողութիւնները։

—

Մեր կարգադիր մասնախորհրդի ուշադրութիւնն ենք հրաւիրում այն կէտի վերայ, որ Նահատակ Վեհապետի յուղարկաւորութեան և նոր Գահակալի գահ նստելու և Թագադրութեան առթով ներկայանալիք պատգամաւորութիւնը կազմակերպէ հասարակութիւնից ընտրուած իր ամեն դասակարգի միմիայն տեղացի անձնաւորութիւններից և ոչ թէ ինչպէս մտադիր էր, իր միջից, դրսեցի հոսհոսների տալ այդ պատիւը։ Ի դէպ է ասել, որ այսպիսի հանգամանքներումն է որ Թէհրանցի հայ հասարակութիւնը պիտի իր միջից միայն ընտրէ իր պատգամաւորութիւնը և ոչ թէ Կաթողիկոսական ընտրութեանց նման պարագաներում։

—

Ընդ միշտ ցաւալի այս դէպքի առթով շատ անձնաւորութիւնք մանաւանդ բարձրաստիճան և դիրք ունեցող անձնաւորութիւններ զինուորական հսկողութեան տակ են տրուած։

—

Այսօր կէսօրից յետոյ Նահատակ Թագաւոր-Հօր դիակին զինուորական պատիւ տրուեցաւ։ Այդ տխուր և սրտաշարժ հանդիսին ներկայ էին ամբողջ աւագանին, զինուորականութիւնը և հասարակութիւնը, որոնք ողբալի սրտով և արտասուալից աչքերով գնացել էին իրենց յարգանքը մատուցանելու իրենց սիրելի Վեհապետին։ Լաց ու կոծին և սրտայուզութեան չափ ու սահման չը կար։ Երկու անգամ լուսանկար հանուեցաւ։

—

Ն. Կ. Մ. Մօզաֆֆէրէդդին Շահնշահի մի հեռագիրը բարձրագոյն հրամայուած առ Ն. Վ. Նախարարապետը յայտարարուեցաւ այսօր հասարակութեանը, որը հաստատում էր նահատակ Թագաւորի, մսի և հացի տուրքերի բարձումը և հրամայում շուտափոյթ գործադրութիւն Իր ի Տէր հանգեալ Ծնողի հրամանները և մայմարոնեայ արձանագրութեանց տախտակների իրենց որոշեալ տեղերում հաստատելը։

—

Անզալիից մեզ գրում են որ այնտեղ կենսական մթերքների չափազանց թանկութիւն է տիրում. ժողովրդի դրութիւնը անտանելի է. մսի ֆունդը 15 շահի իւղի փութը 30 ղ. հացի և մսի տուրքը բառնալու լուրը որ հրատարակուած էր "Շաւիղի" № 10-ում մեծ ուրախութիւն է պատճառել տեղացիներին։

—

Նոյն տեղից մեզ գրում են որ մեծ պատրաստութիւն է տեսնւում այնտեղ Տաճկաց լիազօր դեսպանին ընդունելու, որը Թէհրան էր գալու Ն. Վեհափառութեան. յոբելեանը շնորհաւորելու, հրամայուած է այնպիսի պատրաստութիւն տեսնել ընդունելու ինչպէսին էր Կուրալատկինինը։

—

Մեզ գրում են որ Էնզէլին լցուած է Դավրէժու երկու թաղերի դպրոցների և Թէհրանի վիճակախաղի տոմսակներով մեծ յաջողութեամբ են ծախուել։

ՉՎՀԱՏԻՆՔ ԿՈՒԼԷ

—

Այնպիսի մի ճգնաժամին, երբ տաճկահայ ժողովուրդը, դրա հետ և հայկական խնդիրը ծանր ու դժուարին րոպէներ են անցկացնում, երբ հայկական հորիզոնի վրայ դեռ չէ երևում ոչ մի անտղ և ամենայն ինչ սև մթութեան մէջ է, այսպիսի մի րոպէում անհրաժեշտ է ունենալ կամքի ոյժ ու քաղաքացիական արիութիւն՝ դիտելու այդ վտանգաւոր գրութիւնը և ընդդիմադրելու նրան։

Բայց ներկայումս ինչ է տեղի ունենում մեր կեանքում.—ժողովրդի մի մասի մէջ տիրում է յուսահատութիւն, մի երկու ամիս առաջ ոգևորուած և սպառնական ճառեր խօսողները սկսում են լռել, պապանձուել, «աղգասէրները» քաշուել, մի անկիւն մտնել, մի խօսքով նրանք, "որոնք վարժ են արեգակի տաքութեան, թեթև ցրտից սկսել են դողալ ու սենեակները մտնել... իսկ սրանց տեղը բռնում են նրանք. որոնք այս՝ վերջին ժամամակներս չէին երևում, որոնք միշտ հակառակ են եղել յեղափոխութեան՝ և քարոզել՝ են խաղաղ կուլտուրական՝ մրցում կամ ամեն ինչ թողնել ճակատագրին...՝ Սրանց հետ միասին՝ նոսի են կանգնում և նրանք, որոնք վատթար կառավարութեան ագէնտներն (գործակալ) են՝ և գործում են հայկական կեանքում համաձայն նրա ծրագրի, որոնք ժողովրդին մղում են՝ անպայման հնազանդութեան։ Մի խօսքով, հայկական կեանքի հորիզոնի վրայ երևում են, մի կողմից յուսահատութիւն ու լքում, միւս կողմից «ձի ծնունդների գլուխ բարձրացնելը, որոնք մտած իրենց՝ բունները՝ մնած էին ձևանում,

և իբրև հետևանք այդ բոլորի, մեր կեանքում նը-կատւում են ըէակցիայի նշոյլներ—այստեղ, այն տեղ, խմբեր են երևում, որոնք աշխատում են ժո-ղովրդին յետ մղել, որոնք ժողովրդին քարո-զում են յետ նահանջել....

Դրութիւնը ծանր ու վտանգաւոր է. մա-նաւանդ նա ծանր է դառնում գաղթականու-թեան սկսուելովը: Եւ որ ժողովրդի կեանքում տեղի չեն ունեցել այսպիսի ծանր բոպէներ. նոյն իսկ մեր, հայերիս կեանքում քանի՞ քանի՞ այս տեսակ ծանր բոպէներ են եղել. բայց և այնպէս ժողովուրդը չէ մեռել՝ ապրել է: Կապ-րինք և մենք ու կը յաղթենք, և պարզապէս այն պատճառով, որ մենք կռիւ ենք մղում բռնակալի, բռնակալական ըէժիմի դէմ և ոչ թէ մի որ և է ժողովրդի. մեր կռիւը «ցեղա-կան» չէ, այլ ազատութեան. մենք կռւում ենք այնպիսի մի դրութեան դէմ, որը հիւանդում մարդկային կեանքի ծնունդն է, որը մեռցնում է մեզ ամեն ինչ, որ տանում է քաղաքակր-թութեան, կատարելագործութեան: Եւ որով-հետև պատմութիւնը, մարդկային կեանքը ա-պացուցել, հաստատել են, որ բռնակալի և ժողովրդի մէջ մղուած կռւում յաղթողը միշտ ժողովուրդն է լինում, որովհետև իրերի ըն-թացքը, կեանքի հոսանքը տանում է կէպի կա-տարելագործութիւնը, իսկ բռնակալութիւնը իր էութեամբ ու կազմուածքով մի խոչընդոտ է, պարզ է, որ նա պիտի յաղթի, որ այդ արգելքը պիտի վերանայ: Սա ենթադրութիւն չէ, հասկանալի է, որ մեր կեանքի ներկայ ան-միխիթար ու աննպաստ պայմանները վհատե-ցուցիչ չեն, այլ որ մենք գտնւում ենք մի վր-տանգաւոր դրութեան, կրիզիսի մէջ:

Մենք արդէն քանիցս մատնացոյց ենք եղել մեր մղած կռւի այս յատկութեան ու բնաւո-րութեան վրայ, շեշտելով՝ որ գոյութեան կռւում, երբ կռիւ մղողները բռնակալը ու ժողովուրդն է, յաղթողը լինում է միշտ ժողո-վուրդը, չը նայած որ, յաճախ տեղի են ու-նենում կռւող ժողովրդի կեանքում յուսահա-տեցնող, վհատեցնող բոպէներ, չնայած այդ կռիւը շատ թանգ է նստում ժողովրդին. ջլատում է նրան:

Այսպիսի մի ծանր բոպէում, մենք՞ դարձեալ մատնացոյց ենք լինում դրա վրայ ու հրաւի-րում հայ ժողովրդին չը վհատել, չը լքանալ, չը գաղթել, որովհետև դրանով ինքը իւր գե-բեղմանը կը փորէ, այլ արհամարհել դառն երևոյթը և ձեռք տուած իւր արիասիրտ զաւակներին, արիութեամբ շարունակէ մղել իւր կռիւը որովհետև յաղթութիւնը վերջ ի վերջոյ իրենն է. իսկ յաղթելը ու յաղթելը տեղի է ունենում կռւի մէջ ուրեմն կռւինք շարունակաբար՝ արհամարելով բորբոսնած ուղեղներով գործողներին, կոխկռտելով սո-ղուններին ու դաւաճաններին և հարւածելով թշնամուն: Որքան էլ մեր կեանքի հորիզոնը ամպամած լինի, բայց դարձեալ ազատութեան աստղը երևալու է, ունենանք արիութիւն ու քաղաքացիական պարտաճանաչութիւն կուե-լու:

«Դ.»

ՊԱՊԱՆԾՈՒՄՆ ՁԱՔԱՐԻԱՑԻ

—

Ի՞նչ անուն կը տայիք, եթէ մէկ խըմ-բագրութիւն համարձակւում է արձա-նագրել իր թերթի մէջ «իսկ թէ դուք տգրուկներ էք այդ մասին շօշափելի փաստեր ունինք» տողերը, իսկ երբ բա-ցողրութիւն է պահանջւում, լռում է..

Ի՞նչ անուն կը տայիք, եթէ մի խե-լակորոյս խմբագրութիւն չը կարո-ղանալով իր կիրքը զսպել, ժամահոտ փրփուր է թափում իր բերնից և թու-նաւոր խօսքեր իր գրչից հեռևեալ «և յերջապէս դուք չէք այն տղեաները, ոչ նոր իրանց թոյլեն տալիս անտանուն, անտարազիր նամակներ, յայտարա-րութիւններ ցրւել և գիշերանց քա-ղաքիս պատերին, եկեղեցիների դռներին փակցնել, յայտարարելով որ ձեր չը սի-րած մարդկանց պիտի սպանէք պ՛տի կռտորէք, խողխողէք և այլն» բա-ռերով: Ո՛րն է ուզում այդ խօսքերը ինչ ես ուզում ասել յայտնի չէ, սակայն երբ բացադրութիւն է պահանջւում լռում է.....

Ի՞նչ անուն կը տայիք, եթէ մինչև պրի խորը դաղուած մի խմբագրութիւն, որպէս թէ քաղաքկան, կրկնում է «այդ ձեր, եթէ ոչ մի երկու սրիկաների և գինեմոլների մեքենայու-թիւնները, որով ցանկանում էին ի-րենց մարդի տեղ ջարեւելու վրէժն առնել» շեշտուած խօսքերը, բայց երբ բացադրութիւն է պահանջւում լռում է.....

Ի՞նչ անուն կը տայիք, եթէ մի խըմ-բագրութիւն, յանդգնում է հ՛գնել մի թերթի որ և է լուրը «Ուլեմն աւելորդ է տեսակ տեսակ սանդարամետա-կան խաղեր խաղալուց և հասարա-կութեան մտքերը պղտորելուց յետոյ վերջինի իրաւունքներին պաշտպան հան-դիսանալու պատրուակի տակ յայտա-րարել և այլն» անպատկառ խօսքերով, իսկ երբ բացադրութիւն է պահանջւում, լռում է.....

Վերջապէս, ինչ անուն կը տայիք, եթէ մինչև հոգին խոցուած մի խըմբա-գրութիւն, հահիճ.երում ապրող գորտի նման կրկռում է «մենք միշտ թքել ենք և էլի կը թքենք նրանց վերայ, որոնք ճակատ առ ճակատ կռւելու քաջութիւն չունին...եթէ մարդ էք դուրս եկէք ասպարէզ դէմ առ դէմ ճակատ առ ճակատ կռւեցէք, գնտակի դէմ գնտակ սուրի դէմ սուր» խօսքե-րը, իսկ երբ հրապարակաւ, այդ խօս-քեր կոկռալողներից, բացադրութիւն է պահանջւում, կոկռոցը կտրում սուզ-ում են ջրի տակ.....

Հրապարակաւ զրպարտել մէկին ածա-կաններ, ցեխեր շպրտել մէկի հասցէին կարելի և շատ դիւրին է սակայն, պատաս-խանատուութեան ենթարկուելն էլ ան-խուսափելի:

Ուստի հրապարակաւ և վերջնականա-պէս բաց դրութիւն ենք պահանջում, կանանցից առաջնորդուող թերթի խըմբա-գրութիւնից, իր վերոյիշեալ ակնարկների համար եթէ չի ցանկանում այլապէս այդ բացադրութիւնն առնի նրանից:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Դավրէժ 7 մարտի 96

Բողդ ունեցայ վերջապէս կարդալու „Շաւղի" № 5 համարում պ. Սառիկեան-ցի յունվար ամսոյ 19-ին գրուած ներ-կայացման՝ առթիւ գրածն, թէ ինչպէս պ. յօդւածագիրն առանց կարմրելու հա-մարձակվում է գրել այդ տողերը ես ինքս ինձ հաշիւ տալ չեմ կարողանում. իբրև բարեկամ խորհուրդ կը տայի վերոյիշեալ պարոնին նախ քան գրելը, առաջօրէն մտածէր իրենց դրանից առաջ տրուած (Պէպօ) ներկայացման համար: Որին մաս-նակցում էին Օրիորդք Վարդուհի Պա-պեանը. Սաթինիկ Մաղինեանը, պարո-նայք Վարդան Տ. Վարդանեանցը. Եր-ուանդ Ղազարեանցը, նոյն իսկ պ. յօդւա-ծագիրն և մի քանի անձինք թէ ինչ ա-նախորժութիւն պատճառեցին յաճախո-դաց՝ չեմ կարող նկարագրել, իրենց ար-տասանած աղաւաղեալ և ափեղցփեղ խօս-քերով. որը դերը լաւ չ'էր սովորած ինչ-պէս Վ. Տ. Վ. որը շփոթուած ինչպէս՝ Օր. Վ. Պ. որը շարունակ ծիծաղում էր, (անունը յիշելն աւելորդ եմ համարում,) առանց մտածելու, որ ինքն գտնվում է թատրոնական բեմի վերայ բացի պարո-նայք Մ. Աղայեանցից և Երուանդ Ղա-զարեանցից, մնացեալք բոլորն իրենց դե-րերն արտասանում էին շատ կամաց, որի լսելուն համար սուր ականջներ էին հար-կաւոր. մինչև անգամ ժողովրդեան մի-ջից միշտ աղաղակում էին որ փոքր ինչ բարձր խօսեն. որ գուցէ մի բան հասկա-նան. չէ՞ որ եկել են մի բան լսելու և ոչ թէ նրանց այլ և այլ կապկային և յիմար ձևակերպութեանց ականատես լինելու:

Գալով կռւի բուն պատճառին, թող պ. յօնւածագիրն ինքն խոստովանէ իբ-րև մարդ, որ իրենք էին գլխաւոր պատ-ճառը, տեսնելով որ ներկայացումը յաջող է անցնում, սկսեցին սուլել, առանց մտա-ծելու, որ իրենք մարդ են և ունին մարդ-կային զգացմունք, դրսերում ինչ կին-տոյութիւններ անում են դրանք հէչ, գոնեայ այդքան անթիւ մարկանց մէջ, գէթ փոքր ինչ քաղաքավարի լինելու է, բայց դրանից սովորեցնում են մի արբե-ցող երիտասարդի (ոչն հետևում է իրենց բռնած յիմար ընթացքին), թէ երգեցող հակակուսական պարոնին բեր ծաղրենք ի հարկէ ներկայացումը խանգարելու նպա-տակաւ. պ. Սառիկեանցն շատ լաւ ծա-նօթ է երգող պարոնի հետ, որ ինչպէս Շահլամեանից յետոյ երկրորդ տեղն է բռնում: Զարմանում եմ պ. յօդւածագրի վերայ առանց ամաչելու գրում է թէ հոգաբարձական ժողովում վճռել են դուրս ձգել թէ պ. Ռ. Մովսիսեանին և թէ պ. Յ. Ղազարեանին: Հապա յարգելի պարոն ինչ եղաւ, որ Լիլաւայի դպրոցը ձեր ձեռքում խաղալիք էք շինել. ձեզ անար-գել չի կարելի դա հոգաբարձական մի թուլութիւնն է որ ձեզ վրայ ուշադրու-թիւն չէ դարձնում. մենչև երբ լռենք ձեր այդ կեղտոտ վարմանց համար, մին-չև երբ..... դո՛ւք, ազգային գործիչ ա-նուան դիմակի տակ ծածկուած, կորզում էք խեղճ ժողովրդեան ձեռքից իրենց հազար ու մի տեսակ նեղութիւններով վաստակած դրամն. ապա Մեծապատիւ պարոնայք, ո՞ւր է ձեր բարենպատակ գործի համար տուած ներկայացման ար-դիւնքը կասկած չը կայ որ վաղուց շատ վաղուց այդ դրամները ստամոքսների մէջ անյայտացել են.....

Կացին

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԽԱՐՀԻՑ

—

Ընթերցողները նկատած կը լինին, թէ կառքի անիւները ինչպէս են ներքևից բարձրանում վերև և վերևից գլորւում են ներքև. այդպէս է և քաղաքական աշխարհի դրութիւնը:

Իտալիան, որը վեց մեծ պետութիւն-ներից մէկը և եռապետեան դաշնակցու-թեան մի անդամն էր, նրա ղէնքերը անյաջողութեան յանդիպեցան և նա յաղ-թուեց հեռաւոր Աֆրիկայում մի փոք-րիկ թագաւորութիւնից—Հապէշներից:

Ամբողջ Իտալիան սուգի մէջ է. բարե-կամը ողբում է բարեկամի վրայ, կինը ողբում են ամուսինների վրայ, մայրերը ողբում ըն որդիների վրայ, օրիորդները ողբում են սիրելիների վրայ և վերջա-պէս ամբողջ Իտալիան իր կորստի վերայ:

Իտալիան յաղթուեց, Իտալիան սուգի մէջ է, դրանք բաւական նախատինք չեն Իտալիայի անուան համար, միւս կողմից էլ Եւրոպական լրագիրները գրում են թէ Իտալիայի պարտութեամբ, եռապե-տեան դաշնակցութիւնը լուծուած է յա-մարւում, և դրանից բացի գրում են Իտա-լիայի անունը վեց մեծ պետութիւնների անուան ցուցակից պիտի հանուի, վեր-ջապէս Եւրոպական լրագիրները օրէցօր գուշակութիւններ էին անում Իտալիայի համար: Ահա այդ ժամանակ հզօր Գեր-մանիան ձեռք է մեկնում իր յաղթուած ընկերոջը՝ և նրան մխիթարելու համար Գերմանիայի կայսրը իր ընտանիքով գը-նում է Իտալիա: Դրանից բացի միւս կողմից օգնութեան ձեռք է կուկռում Անգլիան, որը հայկական հարցում պար-տութիւն կրած և ամօթահար յետ էր քաշուել ասպարէզից և ընկերներ էր փնտռում. նա, խորամանկ Անգլիան, խո-րամանկ աղուէսի նման իր որսը գտաւ նա սկսեց կարեկցել Իտալիայի վիճակին և կամաց կամաց մօտենալ եռապետեան դաշնակցութեանը, որով կազմում են քա-ռապետեան դաշնակցութիւն: Քաղաքա-կան աշխարհից, ինչ նոր նոր և ահագին փոթորիկներ կը բարձրանան, այդ ցոյց կտայ ապագան:

Մ.

Դավրէժ 6 ապրիլ 96

ՄԸՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

(Շարունակութիւն)

Այդ «մի վերջին պատասխան» կոչւող որ-պէս թէ խմբագրական յօդւածը. որ թէև քա-ղարկւած՝ սակայն պարունակում է մի քանի թշնամական ակնարկներ յայտնի անձնաւո-րութեանց վերաբերմամբ և սարքւել է դիտ-մամբ ուղղակի վիրաւորելու՝ այն էլ մի քանի այնպիսի հարցերում, որոնք զուրկ են բոլ-որովին հասարական լինելուց, այնպիսի անձ-նաւորութիւնների, որոնք, ըստ յօդւածի ա-սութեան, ծածուկ և ոչ հրապարակապէս քա-ղարկեալ և ոչ բացայայտ քննադատում են ե-րևոյթներ:

Այդ յօդւածը, ինչպէս երևում է բովանդա-կութիւնից, պատասխան է երկու գրածների մէկը Արտանատէր—հրատարակիչ Անդրէան

Բէկնազարեանի մի նամակի ի պատասխան իրենց թերթում ուրիշից տրուած մի յայտարարութեան, իսկ միւսը «Ասդ-Արևելեան թերթը և իր գրաքննիչը» բանասիրականին՝ Միքայէլ Ց. Եղիազարեանի գրուածին։

Այդ յօդուածը սկսելով մի քանի շառլատանական խօսքերով շարունակւում է այսպէս «... այսօր՝ զարմանալի միամտութեաւբ կոկորդիլոսի արտասուք են թափում, որ Ասդ-Արևելեանը լայեղ չի անում իրենցով զբաղուելու...» զարմանալի տգիտութիւն և ստախօսութիւն։ Տգիտութիւն՝ որ կարդացածները չեն հասկանում։ Ստախօսութիւն՝ որ գրուածի բուն միտքը աղաւաղում են. ով խնդրեց ո՞ լայեղ անեն մեզնով զբաղուելու, մենք մինչև անգամ ուրախ ենք մեզնով չը զբաղուելնուն համար և կրկնում «երթ յեսս իմ սատանայ» իսկ կոկորդիլոսի արտասուքներ՝ յայտնի է, այն մարդիկներն են թափում, որ ձեացնում են թէ իրօք արտասուում են, օր. նոյն թերթի գրաքննիչը, որ արտասուում է թերթի համար այնպէս՝ ինչպէս արտասուում է, մանուկների ֆալախկա կապելուն համար...

Եւ ապա կրկնում «...թէ արդեօք ինչ կարևորութիւն ունի Ասդ-Արևելեանի ?!! համար ձեր կեանքը» հիմնուելով հրատարակչի նամակի մի ասացուածքի վրայ «եթէ մի թերթ ըզբաղուի տզրուկներով այլ ևս նա թերթ չէ այլ փալասի կտոր»։ Կարծէք երբ «կեանքի» ըստեղծագործութիւնը եղաւ, այդ յատկապէս Ասդի և նրա սողնային բնաւորութիւն ունեցող թայֆայ կուսակցութեան համար է եղել և ոչ ուրիշի, եթէ նա ապրում է ուրիշն էլ իրաւունք չունի ապրելու, իսկ եթէ հակառակ դէպքում համարձակւում է մէկը ապրել, բնականաբար, նրա համար այդ կեանքը կարևորութիւնից զուրկ է... այդ դատողութիւնն՞ իսկ ցոյց է տալիս այլ օրգանի? հայեցողութեան տեսակէտը։

Բայց ինչն է ստիպում նրան բառեր գործածել երբ նրանց նշանակութիւնն ու միտքն անգամ չի հասկանում, օրինակ «տզրուկ» բառը շատ չարաչար է գործածում նա «իսկ թէ դուք տզրուկներ էք այդ մասին չօշափելի փաստեր ունինք» հատուածին մէջ։ Բացատրենք տզրուկ բառը. «տզրուկ» որի ֆրանսերէնն է sangsue շատ գեղեցիկ չինուած բառ է մանաւանդ փոխաբերական մտքով գործածելուն մէջ, նրա բառական նշանակութիւնն է արիւն ծծող և իսկ փոխաբերական մտքով այսինքն ապօրինի միջոցներով ժողովրդից դրամ կորզող-կլանող, այդպիսի մի միտք ինչու վերագրել մեզ, քանի որ աշխարհը ճանաչում է որ ոչ թէ հասարակութիւնից մենք ոչինչ չենք կորզել, այլ կորզել ենք ուղղակի տզրուկներից. մատնանիշ ենք լինում Հանդ. «Ազգի մշակի» և իր ամբողջ համախոհ գունտի վերայ և նոյն իսկ նոյն թերթի գրաքննիչի. որ բոսն և երկու տարի է շարունակ կպել է դպրոցներին և հակառակ ամեն տեսակ ճարերի էլի պոկ չի գալիս...

Յետոյ խօսում է մեր «չը սիրած հակառակորդներին վտրձկան պարսիկների ձեռքով ծեծել տալու» վրայ որը զուրկ է ամեն հաւանականութիւնից, քանի որ մեր հակառակորդներին՝ ինչքանէլ ստոր ու բարշ լինինէլի սիրում ենք, նրանց կեղտոտութիւնները հրապարակով երեսներին զարկելով, իսկ եթէ պարսիկները փողոցում մի ջհուտ են ծեծում, ինչու է վերագրել մեզ։

Սակայն ամենածիծաղելի կէտն այն է որ Ասդը մտնում է ուրիշների տնային գործերի մէջ, ծառայ պահելու մէջ էլ. Եթէ մի աշխատակից վարձում են որ զողանում խժռում է ամեն ինչ և այդ աշխատակցին դեռ զիջանելով հանդերձ էլի պարտ է մնում նա մի մեծ գումար. էլ [որտեղից՞ էր մնում նրան վարձ որ կուլ տային և լինէր՞ վայրենութիւն և պաշտօնապէս էլ յայտարարէին որ զրպարտութիւն է եղել մեր ասածը. վայրենութիւն կասեն նրան՝ որ կարօտ գիւղացի մարդկանց ծառայութեան են առնում և նրա վարձերը կտրելով վերջն էլ թակելով վռնտում։

Այս և սորա նման մի քանի ուրիշ յիմար քննադատութիւններով է որ վերջանում՞է երկրորդ երեսը։ Իսկ երրորդը Սոկրատ Մ. Գելոֆեանցի և Ռաչտի ուսուցչի(?) նամակները առաջնում նկատելի կէտերն են միայն «բայց լաւ է որ առ այժմ, զէթ թերթի պատի և իմ համեստութեան վարագուրը չը պատռելու համար լռեմ».. խեղճը վախենում է և ինչպէս երևում է, պարոնը եթէ բարեհաճէր մի խօսք ևս ասելու արդէն ինքը անհամեստ.. և թերթն էլ անպատուած կը լինէր։ Ինչու, պատճառի կարօտ չէ այս հարցը։

Չորրորդ երեսն էլ վերջանում է տեղական մի քանի լրերով որի մէջ աչքի է զարկում Փոխ. հօր Թէհրանի հայ հասարակութեան ժողովի հրաւիրելու և մի մասնախորհուրդ ընտրելու լուրը... որ Ամբողջ երկու սիւն է գրրաւել, միայն թէ չեն մտցրել այդ լուրի մէջ «Վեհ. Շահի յորելեանի առթիւ կազմուած յանձնաժողովի առաջին նիստ...»ում տեղի ունեցած և այլ սեթևեթող բրուցատրութիւնքն էլ, որ արդէն առանց ուրիշ նիւթերի էլ կը բաւականանար մէկ քառակուսի մէթր մեծութեամբ թերթի չորս երեսների ամբողջ ծաւ.ն էլ լեցնել...։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՑ

(Գիտական զրոյցներ)

—

(Շարունակութիւն № 10-ի)

Յաջորդաբար կերպարանափոխութեան տեսութիւնն ինչպէս վերևում նկատեցինք՝ մեզ այն կարևոր եզրակացութեան է հասցնում, որ կենդանական և բուսական թագաւորութիւններն իրենց անչափ տեսակներով ճիւղանման եղանակաւ զարգացել են՝ կերպարանափոխելով բնութեան կենսամարտում մի կամ մի քանի փոքրիկ ամենահասարակ կենդանի մարմիններից։ Այդպիսի մի կտոր սպիտակուցի նման էակներ առանց ներքին գործարանների այժմ էլ կան ծովի խորքերում և կոչւում են մոներներ. նրանք որոշ մեծութիւն ստանալով բաժանւում են երկու կտորի և այս եղանակով սերունդ տալով շուտով բազմանում։ Երբ նրանք սաստիկ արագութեամբ աճում և դեռ անբնակ ծովը լցնում սնունդը պակասում է և սկսում է կենսամարտը և նրա հետ կապած զարգացումն ու կերպարանափոխութիւնը։ Սպիտակուց մարմինը կորիզ և կեղև է ստանում և դառնում է բնիկ։ Բընիկը այլ ևս չի բաժանւում այլ երկու կտորները և յաջորդողներից մի քանիսը կապած մնում են իրար հետ և մի հատ օրգանիզմ են կազմում, որի մէջում արդէն սկսում են գործարաններ կազմուել։ Մոներների զարգացման տարբեր ուղղութիւններն յառաջ են բերում բուսական և կենդանական ճիւղաբրութիւնը։ Միացած՝ մոներներից կերպարանափոխւում են հեազհնաէ որդեր, որ արդէն որձ և էգ են և հասարակ՝ բաժանելու՞ աստիճանից դուրս՞ են՞ գալիս։ Որդերից ճիւղանման շեղումով միլիոնաւոր դարերի ընթացքում կերպարանափոխելով յառաջ են գալիս կենդանիների 4 գլխաւոր դասակարգը. աստղանման կենդանիները, յօդաւոր՞ կենդանիները, թուլատարները և ողնակենդանիները, վերջին դասակարգին պատկանում է նոյնպէս մարդս։ Նոյն եղանակով զարգանում է բուսականութիւնը. ծովասեղները, մամռանման՞ բույսեր, կառխաազգի տնկեր և՝ վերջը ծաղիկներ ու ծառեր։

Ինչպէս արդէն յիշեցինք մարդս նոյնպէս պատկանում է կենդանական մի դասակարգին։ Նա կերպարանափոխելով յառաջ է եկել կապկից՞ և շեղուելով մի նոր տեսակ էկազմել։ Նրա սաղմնական՝ զարգացման և անատոմիական կազմակերպութեան նմանութիւնը ըստ բաւականոյն ապացուցանում է նրա կենդանական ծագումը։ Թէև այն կապիկի տեսակն որից մարդը իր անմիջական սկիզբն է է առել ջնջուել է, բայց և այնպէս մարդուս և աւելի զարգացած կապիկների կազմուածքների միջև այնքան զանազանութիւն չը կայ ինչպէս այդ կապիկների և քիչ զարգացածների միջև։ Ինչ վերաբերում է մարդկային հոգեկան ընդունակութեան և կարողութեան, պիտի ասել որ՝ մարդկային հոգին միայն քանակով է տարբերւում կենդանիների հոգուց և ոչ որակով։ Նրա ամեն արտաքին հանգամանքների ազդեցութեամբ զարգացել և այս սքանչելի բարձրութեան է հասել *)։

Հիանալով տեսնում ենք ինչպէս ամբողջ տիեզերքը կերպարանափոխութեան, զարգացման և յառաջադիմութեան մի շղթայ է մեր առջևում բաց անում։ Դաղանման քարից յառաջանում են լաւ կարգաւորուած և սիստեմաւորուած աշխարհներ։ Արեգակի և ջրի կենսատու պայմանների ներքև մոլորակների վրայ կենդանութիւն է արթնանում որ անվերջ կենսամարտի դաշտում առաւելութիւններ է գրաւում և յառաջ ընթանում դէպի կատարելագործութիւն. և տեսնում ենք ինչպէս բնութիւնն իր ամենաբարձր ստեղծագործութեամբ՝ մարդի բանականութեան միջոցաւ սկսում է գիտակցել իր գոյութիւնը և սքանչանալով ճանաչել իր անման վսեմութիւնը։

Վ. Գ. Այզակբէգեան

Լայպցիգ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Իսլամացումները կը շարունակուի։. Վանի՝ Սպակերտ, Կառկառ, և Մամրտանք գիւղերուն մէջ կրօնափոխներուս խստիւ արգելած են հեռանալ իրենց երկիրներէն, առաջ չափահասները միայն կը թլպատուէին, հիմակ սկսած են տղաքներն ալ թլփատել. կրօնափոխ հայերուն մէջ ընտանեկան կարգը բալորովին գոյութիւն չունի»;

—

Կ. Պոլսից ստացանք հետևեալ տեղեկութիւնը. «Վանէն հասած տեղեկութիւնները շատ տագնապեցուցիչ են։ Սուէն և քիւրդերու ու թիւրքերու կատաղութենէն հալածուած խեղճ հայերու բազմութիւն մը շարունակ թափելու վրայ է Վան, ուր արդէն ստուար համախմբում մը կայ։ Քանի ձիւները հալին ու ճամբաները բացուին, այնտեղ ապաստանող հայերու թիւը՞ երթալով պիտի աճի։ Սակայն այս ժողովուրդը կերակրելու և անոնց կեանքը ապահովելու համար ոչինչ կարելի եղած է ընել»։

Մշակ

Արտօնատէր հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորին Վեհափառութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսը հեռագրով հրամայած է Հանգուցեալ Բարեգութ Շահի համար տեղւոյս եկեղեցիների մէջ աղօթք մատուցանել։

Ուստի յառաջիկայ կիւրակէ ապրիլ 28-ի որուրբ Գէորգ եկեղեցւոյ մէջ առաւօտ ժամ 10½-ին հանդիսաւոր աղօթք պիտի մատուցուի։ Կը խնդրուի հայ հասարակութիւնից սև զգեստով և հայ պաշտօնեաներից համազգեստով ներկայ գտնուիլ։

Առաջնորդական տեղապահ
Ը. Ծ. վ. Այվատեան

ԳՐԱՏՈՒՆ ՊՕՂՈՍ ՊԱԼԷՆՑ

Զաքմաքճըլար թիւ 20
Կ. ՊՕԼԻՍ

LIBRAIRIE
B. BALENTZ
Rue Tchakmaktchelar № 20
CONSTANTINOPLE

1. Գրացուցակ Պ. Պալենց գրատան. փափագողաց ձրի կը տրուի եթէ իրենց հասցէն յայտնեն։
2. Հաւաքածոյ ծաղկաքաղ. ը. կ. արձակ և ոտանաւոր » 40
3. Երախայրիք. բանաստեղծական և թատերգական արձակ և տաղաչափեալ գրուածք » 50
4. Ազգային ժողովրկական մատենադարան. դաստիարակութիւն մարց. » 25
5. Ընթացք ի գրոց բարբառ. գրեց Տէր Եղիշէ Ծ. վ. Դուրեանց. » 30
6. Հաւաքածոյ ընտիր մատենագրաց, ընտրելագոյն հատուածք նախնեաց և արդի գրաբառ լեզուաւ. 1 »
7. Հիւանդին բարեկամը կամ առաջնորդ հիւանդաց դարմանման. յօրինեց Տէր Ս. Յակովբ. 1 25
8. Պատմութիւն Մեծին Աղեքսանդրի » 40
9. Քերականութիւն գրաբառ լեզուի. » 25
10. Բառագիտութիւն հայերէն քերականութեան. » 25

3—3

*) Այդ մասին ուրիշ տեղ առիթ կունենանք աւելի մանրամասնաբար խօսել։